

**14. ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԲՈԼՈՐ ՀՆԱՐԱՎՈՐ
ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՎ ԸՆՏՐՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿԻ
ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ,
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ**

Նախագծային փաստաթղթերով դիտարկվում է երկու հիմնական տարբերակ՝

1. Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի Գորսալի տրավերտինների տեղամասի շահագործում բաց եղանակով,

2. զրոյական տարբերակ:

Տեղամասի շահագործման դեպքում ստացվում է տրավերտինի երեսպատման բլոկներ և ջարդքար, որը կօգտագործվի ցեմենտի արտադրության մեջ, որը օգտագործվելու է շինարարության մեջ: Առաջարկվող բնապահպանական միջոցառումները թույլ են տալիս վերահսկել և նվազագույնին հասցնել ընդերքօգտագործման արդյունքում շրջակա միջավայրին հասցվող վնասները: Տեղամասի շահագործման ավարտից հետո նախատեսվում է մշակված տարածքում իրականացնել տեխնիկական և կենսաբանակ ռեկուլտիվացիա, որի արդյունքում տարածքը կդառնա գյուղատնտեսական նպատակներով օգտագործելի, ի տարբերություն ներկայիս վիճակի, որտեղ առկա են ճահիճներ: Բացի այդ, տեղամասի շահագործումը դրական ազդեցություն կունենա համայնքի սոցիալական կյանքի վրա՝ ապահովելով 36 աշխատատեղ՝ միջինից բարձր աշխատավարձով և նվազագույնը 500 հազ. դրամի մուտքեր համայնքային բյուջե: Այն կապահովվի ֆինանսական մուտքեր համայնքային և պետական բյուջե:

Հանքավայրի շահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը կառավարելի:

Զրոյական տարբերակի՝ աշխատանքներից հրաժարվելու դեպքում վերը թվարկված բոլոր առաջխաղացումները տեղի չեն ունենալու: Հետևաբար, հաշվի առնելով աշխատանքների իրականացման դեպքում ձևավորվող բոլոր հնարավոր սոցիալ-տնտեսական օգուտները, նախատեսվող գործունեությունը դիտարկվում է որպես արդյունավետ (կարճաժամկետ և երկարաժամկետ կտրվածքով), հեռանկարային և նպատակահարմար:

15. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման կամ վերացման նպատակով նախատեսված բնապահպանական միջոցառումները ներկայացված են ստորև՝ ըստ առանձին ազդեցության շրջանակների:

15.1 Ջրային ռեսուրսների, ջրի որակի և քանակի պահպանություն

Հանքարդյունահանման աշխատանքների արդյունքում ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա: Ջրային ռեսուրսների պահպանության լրացուցիչ միջոցառումներ չեն նախատեսվում:

Հանքարդյունահանման աշխատանքների ընթացքում ջուրն օգտագործվելու է փոշենստեցման, լեռնային զանգվածների խոնավացման, ինչպես նաև սպասարկող անձնակազմի խմելու, կենցաղային և հիգիենիկ նպատակներով:

Փոշենստեցման համար ջրցանը նախատեսվում է իրականացնել այնպիսի ծավալներով, որ արտահոսք չառաջանա, իսկ մթնոլորտային տեղումների ջրերը ինքնահոս կհեռացվեն բացահանքի սահմաններից:

Արտադրական տարածքի կենցաղային կեղտաջրերը կուտակվելու են բետոնապատ անթափանց հորում, որտեղից պարբերաբար հեռացվելու են հատուկ ծառայության ուժերով: Աշխատանքների ավարտից հետո դատարկված հորը կլցվի քարերով, կծածկվի հողի շերտով:

15.2 Հողերի որակի հսկողություն

1. Հողածածկույթի աղտոտումը վառելիքաքսուկային նյութերով կանխելու նպատակով նախատեսվում է.

- շահագործել տեխնիկատրանսպորտային միջոցները սարքին վիճակով՝ բացառելու համար վառելիքի և յուղի պատահական արտահոսքը,

- իրականացել մեքենաների տեխնիկական սպասարկումն մասնագիտացված ընկերությունների տարածքում, որտեղ առկա են բոլոր անհրաժեշտ պայմանները յուղերի, քսայուղերի փոխարինման, պահպանման և պահեստավորման համար,

– իրականացնել նավթամթերքների պահեստավորում և պահում արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկով ապահովված պահեստ), որին տրվում է համապատասխան թեքություն, որն էլ ապահովում է թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը:

2. Հողի աղբոսումը կանխելու նպատակով նախատեսվում է արտադրական հարթակում և աշխատակիցների հանգստյան վայրերում տեղադրվել աղբամաններ:

3. Օգտակար հանածոն ծածկող ապարները՝ հողաբուսական շերտը պահպանելու համար նախատեսվում է.

- հանքավայրի շահագործման սկզբնական շրջանում դրանք տեղավորել տեղամասի սահմաններում հատուկ հատկացված վայրում՝ հյուսիսային մասում ձևավորվելիք արտաքին ժամանակավոր լցակույտում,
- շահագործման 4-րդ տարվանից սկսած լցակույտի օգտակար հանածոն ծածկող ապարները տեղափոխել և փռել բացահանքի մշակված տարածությունում,
- հողաբուսական շերտի մնացած ծավալը էքսկավատորով անմիջապես վերալցնել բացահանքի մշակված տարածություն և փռել դրա հատակին,
- փռված հողաբուսական շերտի հողմատարումը կանխելու համար դրանք պարբերաբար ջրցանել՝ թույլ ինտենսիվությամբ,
- հողաբուսական շերտի ողողումը կանխելու համար կառուցել անձրևաջրերի հեռացման առուներ:

4. Լանդշաֆտը վերականգնելու համար նախատեսվում է արդյունահանման աշխատանքների ավարտից հետո իրականացնել խախտված տարածքների ռեկուլտիվացիա:

15.3 Խախտված հողատարածքների վերականգնում

Լանդշաֆտը վերականգնելու համար նախատեսվում է արդյունահանման աշխատանքների ընթացքում և ավարտից հետո իրականացնել խախտված տարածքների ռեկուլտիվացիա երկու փուլով՝ տեխնիկական և կենսաբանական:

15.3.1. Ռեկուլտիվացիոն աշխատանքների տեխնիկական փուլ

Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիան կիրականացվի արդյունահանման աշխատանքների ընթացքում և դրանից հետո: Արդյունահանման աշխատանքների ընթացքում նախատեսվում է բացահանքի սահմաններում ձևավորված արտաքին ժամանակավոր լցակույտից օգտակար հանածոն ծածկող ապարները՝ հողաբուսական շերտը, տեղափոխել և փոել բացահանքի մշակված տարածությունում՝ 970-960 մ նիշ ունեցող հանքաստիճանների վրա: Շահագործման 4-րդ տարվանից սկսած օգտակար հանածոն ծածկող ապարների (հողաբուսական շերտի) մնացած ծավալը՝ ըստ մշակվող հանքաստիճանների, նախ տեղափոխվում են 15-20 մ հեռավորության վրա և կուտակվում աշխատանքային հրապարակին հարող տարածքում: Այնուհետև կուտակված օգտակար հանածոն ծածկող ապարները՝ անմիջապես օգտակար հանածոյի հանութաբարձման աշխատանքներից հետո (մեկ կամ երկու աշխատանքային ճակատի երկարության չափով), էքսկավատորով վերալցվում է բացահանքի մշակված տարածություն՝ ձևավորելով ներքին լցակույտ: Քանի որ վերոնշյալ գործողությունները կատարվում են շահագործման ընթացքում, ուստի ծախսերը նույնպես համարվում են ընթացիկ շահագործական:

Շահագործման աշխատանքների ավարտից հետո կկատարվի բացահանքի ողջ մշակված տարածության, արտադրական հրապարակի և կառուցված ճանապարհի հարթեցման աշխատանքեր, ընդհանուր մոտ 6.624 հա տարածքում: Հարթեցման աշխատանքները կկատարվեն SDLG L956FH մակնիշի բարձիչով:

Բացահանքի, արտադրական հրապարակի խախտվող տարածքների և կառուցված ճանապարհի մակերեսների ռեկուլտիվացման աշխատանքները կկանոնակարգվեն ՀՀ կառավարության 14.12.2017թ. թիվ 1643-Ն որոշման պահանջների համապատասխան: ՀՀ կառավարության 18.08.2021թ. թիվ 1352-Ն «Ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգը սահմանելու մասին» որոշման պահանջների համապատասխան կազմվել է ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշիվը: Բացահանքի մշակված տարածության նյութերի ծախսի հաշվարկը, անվանական աշխատավարձի և լեռնատեխնիկական ու կենսաբանական ռեկուլտիվացման ծախսերի խոշորացված նախահաշիվները ներկայացված են համապա-

տասխանաբար աղյուսակներ 15.1-15.3-ում, ամորտիզացիոն ծախսերի հաշվարկներ չի իրականացվել, քանի որ լեռնատրանսպորտային միջոցները ձեռք են բերվելու վարձակալության հիմունքներով: Նյութերի ծախսի հաշվարկները իրականացվել են հաշվի առնելով SDLG L956FH մակնիշի բարձիչի տեխնիկական բնութագրերը, ըստ որի նշված բարձիչը 1 ժամ աշխատանքի դեպքում ծախսում է միջինը 40 լ դիզ. վառելիք, 250 ժամում՝ 37 լ (20 կգ) քսայուղ, 2000 ժամում՝ 250 լ հիդրավլիկ յուղեր:

Աղյուսակ 15.1

Հողերի ռեկուլտիվացման տեխնիկական փուլի նյութերի ծախսի հաշվարկ (Ն_տ)

Աշխատանքի անվանումը, օգտագործվող սարքավորումը	Ծախսվող նյութի անվանումը	Նյութերի ծախսերը, լ	Նյութերի արժեքները	
			Միավորի արժեքը, դրամ	ընդ. արժեքը, հազ. դրամ
Հարթեցում՝ SDLG L956FH մակնիշի բարձիչով	դիզ.վառելիք	960	500	480
	հիդրավլիկ յուղ	4	1000	4
	քսայուղեր	3	2000	6
<i>Ընդամենը՝</i>				<i>490</i>

Աղյուսակ 15.2

Հողերի ռեկուլտիվացման տեխնիկական փուլի աշխատանքների աշխատավարձի հաշվարկ (Ս_տ)

Պաշտոնը կամ մասնագիտությունը	Աշխատանքի տևողությունը, ամիս	Մարդկանց քանակը	Ամսական աշխատավարձը, հազ. դրամ	Աշխատավարձի ֆոնդը, հազ. դրամ
Տեղամասի պետ	0.1	1	500	50
Բուլդոզերավար	0.1	1	350	35
<i>Ընդամենը՝</i>				<i>85</i>

15.3.2. Ռեկուլտիվացիոն աշխատանքների կենսաբանական փուլ

Ռեկուլտիվացիոն աշխատանքների կենսաբանական փուլն իրականացվելու է օգտակար հանածոյի ամբողջ պաշարների արդյունահանումից հետո, հանքի փակման փուլում: Կենսաբանական փուլի ժամանակ նախատեսվում է տեխնիկական ռեկուլտիվացիայի ենթարկված տարածքում ցանել կորնզան, որի համար անհրաժեշտ կլինի.

$$\text{Ն}_4 = 66240 : 70 \times 2200 + 80000 = 2161.8 \text{ հազ. դրամ,}$$

որտեղ 66240-ը վերականգնվող տարածքի մակերեսն է մ² (բացահանքի տարածք՝ 65500 մ², արտադրական հրապարակ՝ 320 մ², ճանապարհ՝ 420 մ²), 70-ը՝ երեքնուկի սերմի ծած-

կող մակերեսը, $\text{մ}^2/\text{կգ}$, 2200-ը՝ 1 կգ երեքնուկի սերմի շուկայական գինը, դրամ, 80000-ը՝
 ցանոդ մեքենայի անհրաժեշտ նյութերի ծախսը, դրամ:

Բացի վերը նշված ծախսից անհրաժեշտ է նաև հաշվի առնել աշխատուժի վարձատրությունը. խոշորացված հաշվարկներով այս փուլը կտևի 15 օր, իսկ աշխատավարձը կկազմի 200 հազ. դրամ (U_{24}): Հետևաբար, կենսաբանական ռեկուլտիվացիայի ուղղակի ծախսը կկազմի.

$$\text{ՈւՄ}_4 = 2161.8 + 200 = 2361.8 \text{ հազ. դրամ:}$$

Աղյուսակ 15.3

Ռեկուլտիվացիոն ծախսերի խոշորացված նախահաշիվ

Ծախսերի հոդվածները	Բանաձևը	Զափման միավորը	Գումարը
Տեխնիկական փուլի ուղղակի ծախսեր (ՈւՄ_m)	$\text{ՈւՄ}_m = U_{2m} + \text{Ն}_m$	հազ. դրամ	575.0
Կենսաբանական փուլի ուղղակի ծախսեր (ՈւՄ_4)	$\text{ՈւՄ}_4 = U_{24} + \text{Ն}_4$	հազ. դրամ	2361.8
<i>Ընդամենը (ՈԻԾ)՝</i>			<i>2936.8</i>
Անուղղակի ծախսեր ($U\bar{\sigma}$)	$U\bar{\sigma} = ((\text{ՈւՄ}_m + \text{ՈւՄ}_4) \times 5.3) / 100$	հազ. դրամ	155.7
<i>Ընդամենը ծախսեր $\Sigma \bar{\sigma}$՝</i>			<i>3092.5</i>
Շահույթ ($\bar{\sigma}$)	$\bar{\sigma} = ((\text{ՈւՄ} + U\bar{\sigma}) \times 10) / 100$	հազ. դրամ	309.2
Նախագծման ծախսեր ($\bar{\sigma}_n$)	$\bar{\sigma}_n = \bar{\sigma}_n \times \Sigma \bar{\sigma}, (\bar{\sigma}_n = 0.1)$	հազ. դրամ	309.2
Մեղմացման միջոցառումների ծախսերը ($\bar{\sigma}_m$)	$\bar{\sigma}_m = \bar{\sigma}_m \times \Sigma \bar{\sigma} (\bar{\sigma}_m = 0.15)$	հազ. դրամ	463.9
Տեխ. և կենս. ռեկուլտիվացիայի աշխատանքների արժեքը (U)	$U = \Sigma \bar{\sigma} + \bar{\sigma} + \bar{\sigma}_n + \bar{\sigma}_m$	հազ. դրամ	4174.8
Միավոր մակերեսի վերականգնման աշխատանքների արժեքը (u)	$u = U/U_{\text{բ}}$	դրամ/ մ^2	63.0

15.4 Մթնոլորտային օդի որակի հսկողություն

Օդային ավազանի աղտոտումը կանխելու համար նախատեսվում է.

- փոշենստեցման նպատակով օդի դրական ջերմաստիճանի դեպքում կատարել փոշեառաջացման օջախների (բացահանք, աշխատանքային հրապարակներ, մոտեցնող ճանապարհներ և այլն) ինտենսիվ ջրում,
- ուժեղ քամիների դեպքում առավել ինտենսիվ փոշեգոյացնող աշխատանքների ժամանակավոր սահմանափակում,
- տրանսպորտային միջոցների արագության սահմանափակում հանքավայրի տարածքում՝ մինչև 20 կմ/ժ արագությամբ,
- վնասակար արտանետումները կրճատելու նպատակով նախատեսվում է՝

- թույլատրել աշխատել միայն սարքին մեքենաներին,
- ինքնաթափի վրա տեղադրել կատալիտիկ չեզոքացուցիչներ:

15.5 Թափոնների ծավալների հսկողություն

Թափոնների կառավարման համար նախատեսվում է.

- իրականացնել մեքենայական յուղերի և քսայուղերի փոխարինում մասնագիտացված ընկերություններին կողմից,
- հանձնել կապարե կուտակիչները լիցենզիավորված մասնագիտացված ընկերություններին՝ պայմանագրային հիմունքներով,
- հավաքել հնամաշ դետալները ու մասերը հատկացված առանձին տեղում և հանձնել որպես մետաղական ջարդոն,
- հավաքել կենցաղային աղբը հատուկ անթափանց տարրաների մեջ, համապատասխան աղբահավաք ծառայություն մատուցող կազմակերպության կողմից տեղափոխել մոտակա կազմակերպված աղբավայր:

Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի Գորսալի տրավերտինների տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման ժամանակ առաջացող թափոնների ցանկը բերված է աղյուսակ 15.1-ում:

Աղյուսակ 15.4

Առաջացող թափոնների բնութագրերը

Հ/Հ	Թափոնի անվանումը	Ծածկագիրը	Վտանգավորության դասը	Ծավալը, տարի
1.	սպառողական հատկությունները կորցրած կապարե կուտակիչներ՝ առանց էլեկտրոլիտի	92110102 13 01 3	3	4 հատ կամ մոտ 80 կգ
2.	բանեցված կոմպրեսորային յուղեր	54100211 02 03 3	3	1.6 տ
3.	չտեսակավորված պողպատ պարունակող թափոններ	35120111 01 00 4	4	4.7 տ
4.	բանեցված տրանսմիսիոն յուղեր	54100206 02 03 3	3	5.5 տ
5.	բանեցված ավտոմոբիլային յուղեր	54100202 02 03 3	3	1.8 տ
6.	յուղոտված լաթեր	58200600 01 01 4	4	0.9 տ
7.	բանեցված օդաճնշիչ դողեր	57500200 13 00 4	4	1.96 տ
8.	կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված կենցաղային աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)	91200400 01 00 4	4	3.24 տ

15.6 Աղմուկի և թրթռման վերահսկողություն

Աղմուկի նվազեցման նպատակով նախատեսվում է մեքենաները սարքավորվել ձայնախլացուցիչներով:

15.7 Վայրի բնության պահպանության և հսկողություն

ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների աճելավայրեր չեն հայտնաբերվել: Այնուամենայնիվ, գործունեության ընթացքում դրանց հանդիպելու դեպքում կձեռնարկվեն պահպանության միջոցառումներ՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի հուլիսի 31-ի «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N 781-Ն որոշման դրույթներով, համաձայն որի իրականացվում են հողերում առկա օբյեկտների պահպանությանն ուղղված հետևյալ միջոցառումները.

1. վայրի բուսատեսակների և դրանց պոպուլյացիաների վիճակի ուսումնասիրության (տեսակային կազմ, տարածվածություն, քանակ) իրականացում, որի տվյալները սահմանված կարգով տրամադրվում են բուսական աշխարհի պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում լիազորված պետական մարմին,

2. բուսատեսակների այլ աճելավայրեր ապօրինի տեղափոխման և այդ տարածքում այլ տեսակների կլիմայավարժեցման կանխարգելում,

3. կենսաբանական տեխնոլոգիաների միջոցով ստացված կենդանի ձևափոխված օրգանիզմների ապօրինի օգտագործման և օտարածին տեսակների ներմուծման կանխարգելում,

4. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ արգելված թունաքիմիկատների օգտագործման կանխարգելում:

Վերը նշված կետերի իրականացման համար ընկերությունը պարբերաբար կիրականացնի մշտադիտարկումներ և կարմիրգրքյան տեսակների հայտնաբերման դեպքում կդիմի համապատասխան մասնագետի, որը տեղում կնշագրի նշված տարածքում առկա բոլոր ներկայացուցիչներին, այնուհետև կախված նմուշների քանակից կամ դրանց աճե-

լավայրերից, կցանկապատվեն և կմնան անձեռնամխելի, կամ առանձին նմուշների կվերատնկվեն մոտակա համապատասխան բնակմիջավայրում՝ բուսաբանի հսկողությամբ:

ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիների ապրելավայրեր չեն հայտնաբերվել: Հայտնաբերելու դեպքում կենդանական աշխարհի պահպանությանն նպատակով կիրականացվեն հետևյալ միջոցառումները՝ ապահովել.

ա) գենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանությունը, պաշտպանությունը, բնականոն վերարտադրությունը,

բ) կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը,

գ) կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության պահպանությունը,

դ) կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը:

Բնապահպանական կառավարման պլանը աղյուսակի տեսքով ներկայացված է հավելված 3-ում, որտեղ ներառված են ժամկետները և վճարները:

**16.ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ
ԾՐԱԳԻՐԸ**

Շրջակա միջավայրի վրա ազդեցության մոնիթորինգն ու դրա արդյունքների տրամադրումը լիազոր մարմինն պետք է իրականացվի ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N 191-Ն որոշման պահանջների համաձայն, մասնավորապես.

- մշտադիտարկումների իրականացման վայրերը պետք է ներկայացվեն համապատասխան քարտեզագրական նյութերում,
- ընդերքօգտագործողները պարտավոր են ընդերքօգտագործման իրավունք հայցելու նպատակով ներկայացվող նախագծային (ծրագրային) փաստաթղթերում ամրագրված ցուցանիշներից բացասական շեղումների դեպքում նախաձեռնել անհրաժեշտ քայլերը հետևանքները վերացնելու համար,
- մշտադիտարկումների արդյունքների վերաբերյալ տարեկան ամփոփ հաշվետվությունները (ոչ մետաղական օգտակար հանածոների դեպքում) ընդերքօգտագործողները լիազոր մարմին են ներկայացնում թղթային կամ էլեկտրոնային եղանակով,
- ամփոփ տարեկան հաշվետվությունն ընդերքօգտագործողները լիազոր մարմին են ներկայացնում մինչև յուրաքանչյուր տարվան հաջորդող տարվա փետրվարի 20-ը (բացառությամբ շրջակա միջավայրի աղտոտվածության մշտադիտարկումն ավտոմատ չափման սարքերով իրականացնող ընդերքօգտագործողների),
- ընդերքօգտագործողի էլեկտրոնային կայքի առկայության դեպքում ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորված մշտադիտարկումների հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում գնահատված արդյունքների վերաբերյալ ամփոփ տարեկան հաշվետվությունը տեղադրվում է այդ կայքում,
- շրջակա միջավայրի աղտոտվածության մշտադիտարկումն ավտոմատ տրամաչափարկված չափման սարքերով իրականացնող ընդերքօգտագործողները չափման արդյունքներն իրենց էլեկտրոնային կայքում տեղադրում են անմիջապես չափման ավտոմատ համակարգերից տվյալների փոխանցման միջոցով,

- լիազոր մարմինը ամփոփ տարեկան հաշվետվություններն ստանալուց հետո ամփոփում է դրանք և 10 աշխատանքային օրվա ընթացքում տեղադրում լիազոր մարմնի պաշտոնական կայքում,

- յուրաքանչյուր 5 տարին մեկ անգամ ընդերքօգտագործողները պարտավոր են վերանայել և լիազոր մարմնի հետ համաձայնեցնել ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող աշխատանքների ծրագիրը և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչները:

Աղյուսակ 16.1 -ում բերվում է շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցության նախնական գնահատական մատրիցան:

Աղյուսակ 16.1

Հնարավոր ազդեցությունների նախնական գնահատման մատրիցա

Շրջակա միջավայրի բաղադրիչներ	Գործողություններ		
	Արտադրական հրապարակ	Ավտոտրանսպորտ	Արդյունահանման աշխատանքներ
Մթնոլորտային օդ	ցածր կարճատև	ցածր կարճատև	ցածր կարճատև
Ջրեր	-	-	-
Հողեր	ցածր երկարատև	ցածր կարճատև	ցածր երկարատև
Կենսաբազմազանություն	աննշան	աննշան	աննշան
Պատմամշակութային հուշարձաններ	-	-	-

Հանքավայրի շահագործման աշխատանքների ընթացքում «ՋԻ ԹԻ ԲԻ ՍԹՈՈԻՆ» ՍՊ ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման և մեղմացման ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդ արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ, որպես սահմանային թույլատրելի խտությունները ընդունվելու են՝ ածխածնի օքսիդի համար՝ 5 մլգ/մ³, ազոտի երկօքսիդի համար՝ 0.2 մլգ/մ³, մրի համար՝ 0.15 մլգ/մ³,

2. լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ, տարին մեկ անգամ հաճախականությամբ,

3. արտադրական հրապարակի տարածքի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ ըստ ՀՀ կառավարության 08.02.2018 թ.-ի թիվ 124-Ն որոշմամբ սահմանված աղտոտիչ նյութերի,

4. կենսաբազմազանության մշտադիտարկում՝ ըստ անհրաժեշտության, որի պարբերությունը կսահմանվի օգտակար հանածոյի արդյունահանումն իրականացվող կազմակերպության կողմից՝ հիմնվելով հայցվող տարածքում բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների հայտնաբերումից:

ՀՀ կառավարության 22.02.2018թ. N191-Ն որոշման պահանջներին համապատասխան կազմվել է մշտադիտարկումների պլան, որտեղ ներկայացված են մշտադիտարկումների օբյեկտները, վայրերը, տեսակները, ցուցանիշները և նվազագույն հաճախականությունները (աղյուսակ 16.2) և հապապատասխան մշտադիտարկման կետերի տեղադիրքերի քարտեզ-սխեմա (նկար 16.1-ում):

Աղյուսակ 16.2

Մշտադիտարկումների պլանի կառուցվածքն ու բովանդակությունը


Մշտադիտարկումների օբյեկտը	Մշտադիտարկումների վայրը	Ցուցանիշը	Մշտադիտարկման տեսակը	Նվազագույն հաճախականությունը
1	2	3	4	5
Մթնոլորտային օդ	Բացահանքի տարածք, ճանապարհներ, ժամանակավոր լացակույտում (միայն շահագործման առաջին երեք տարվա ընթացքում), արտադրական հրապարակ, ազդակիր համայնքներ, ըստ քամիների վարդերի գերակշռող ուղղությունների արտանետումների աղբյուրից 5 կմ հեռավորություն	հանքափոշի, այդ թվում՝ ծանր մետաղներ և կախյալ մասնիկներ (PM10 և PM2.5), ածխածնի օքսիդ, ածխաջրածիններ, ազոտի օքսիդներ, մուր, ծծմբային անհիդրիդ, Բենզ(ա)-պիրեն, մանգանի օքսիդներ, ֆտորիդներ, երկաթի օքսիդներ, ֆտորաջրածին	նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, չափումներ ավտոմատ չափման սարքերով	շաբաթական մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ

1	2	3	4	5
Հողային ծածկույթ	հայցվող տարածք (ճանապարհներ, արտադրական հրապարակ)	հողերի քիմիական կազմը, հողերի կազմաբաժանությունը, հումուսի պարունակությունը, հողերում նավթամթերքների պարունակությունը	նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, չափումներ ավտոմատ չափման սարքերով	տարեկան մեկ անգամ
Աղմուկ և թրթռում	հայցվող տարածք (բացահանք)	աղմուկի մակարդակը և թրթռումների ազդեցությունը	չափումներ շարժական աղմկաչափով	ամսական մեկ անգամ
Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ	Արդյունահանման տարածքին հարակից շրջան	տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն	հաշվառում, նկարագրություն, քարտեզագրում	տարեկան մեկ անգամ

Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման և աղտոտվածության հանքավայրի շահագործման նպատակով վերցված նմուշների լաբորատոր հետազոտությունը նախատեսվում է իրականացնել հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում:

Ընկերության արտադրական հրապարակում կնախատեսվի համապատասխան հադորդակցման համակարգ (ինֆորմացիոն և շարժական կապ), որով հնարավոր է արտակարգ իրավիճակների ժամանակ կապ հաստատել ձեռնարկության վարչական կազմի, տեղական ինքնակառավարման մարմինների, շտապ օգնության հետ: Նախատեսվում է նաև սահմանել պոտենցիալ արտակարգ պայմանների գոյացում և սահմանել գործողություններ, որոնց պետք է հետևել՝ նվազագույնի հասցնելու համար կյանքի կորստի և ունեցվածքի վնասի վտանգը և այլն:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախնական գնահատմամբ նախատեսվում է հատկացնել տարեկան 500 հազ. դրամ:



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

	Հայցվող տարածքի եզրագիծը		Լեռնային աշխատանքների արդյունքում փոփոխված հորիզոնականներ		Հանքատիճանի եիշը
	Բնական մակերևույթի հորիզոնականներ		Արտադրական հրապարակ		Հանքատիճաններ
	Գործող ճանապարհներ		1 Բեռնաբեռնի տեսակի տեսակ		Ժամանակավոր արտաքին լցակայան՝ բացահանքի սահմաններում
	Նախագծվող ճանապարհ		2 Բեռնաբեռնի տեսակի ջրհոսք		
	Բացահանքային ճանապարհ		3 Արտաքին		
			4 Վատելիքաբաժնի տեսակի կառուցվածք		
	1 Մթնոլորտի աղտոտվածության մշտադիտարկման կետ բացահանքի մշակվող տարածությունում				5 Հողի աղտոտվածության մշտադիտարկման կետ արտաքին լցակայանում
	2 Մթնոլորտի աղտոտվածության մշտադիտարկման կետ արտաքին լցակայանի մոտ (միայն շահագործման առաջին երեք տարվա ընթացքում)				6 Հողի աղտոտվածության մշտադիտարկման կետ ավտոմեքենայի մոտ
	3 Մթնոլորտի աղտոտվածության մշտադիտարկման կետ արտաքին լցակայանում				7 Աղմուկի մակարդակի մշտադիտարկման կետ բացահանքում
	4 Մթնոլորտի աղտոտվածության մշտադիտարկման կետ ավտոմեքենայի մոտ				8 Կենսաբազմազանության մշտադիտարկման կետ տեղամասի հարակից շրջանում

Նկար 16.1. Մշտադիտարկման կետերի տեղադիրքերի քարտեզ-սխեմա


Բնապահպանական կորուստների նվազեցման, ազդեցության նպատակով պլանավորվող միջոցառումները, դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչները և իրականացման համար նախատեսված գումարները նախնական գնահատմամբ ներկայացված են բնապահպանական կառավարման պլանում (հավելված 3):

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ**

1. Արարատի մարզի Վեդի համայնքի պաշտոնական կայքէջ: ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի անձնագիր. <https://vedicity.am>
2. ՀՀ վիճակագրական կոմիտեի կայքէջ: ՀՀ Արարատի մարզը թվերով, 2024. <https://armstat.am>
3. Արարատի մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքէջ. <http://ararat.mtad.am/>
4. Կադաստրի կոմիտեի պաշտոնական կայքէջ: Հողային հաշվեկշիռը ըստ համայնքների. <https://www.cadaastre.am>
5. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն: Տեղեկատվություն օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքօգտագործման իրավունքներ մասին. <https://www.mtad.am/>
6. Հանրապետական երկրաբանական ֆոնդ. <https://www.geo-fund.am/>
7. Հայաստանի ազգային ատլաս: «Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ, Երևան, 2007
8. Ա. Բարսեղյան և ուրիշներ: Հաշվետվություն ՀՀ Արարատի մարզի Արարատի տրավերտինների հանքավայրի Արևմտյան տեղամասում կատարված երկրաբանա-հետախուզական աշխատանքների արդյունքների մասին՝ 01.06.2001 դրությամբ պաշարների հաշվարկմամբ: Պետական գրանցման № Ֆ-00-25/1, Երևան 2001: 101 էջ:
9. ՀՀՇՆ 20.04- «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր»: ՀՀ քաղաքաշինության կոմիտե, Երևան, 2020թ.
10. ՀՀ ԱԻՆ, Հայաստանի Հանրապետությունում սողանքային աղետի կառավարման ծրագիր: Երկրորդ տարվա Ավարտի վերաբերյալ հաշվետվություն, Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալություն, «Նիպպոն Կոնեի Կո.» ՍՊԸ, 2017
11. ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» ՀՀ շինարարական նորմերը
12. ՀՀ ՇՄՆ «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ: «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները» Ժամանակավոր առաջարկություններ. <https://meteomonitoring.am/page/1591>
13. ՀՀ ՇՄՆ «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ. ՀՀ շրջակա միջավայրի մոնիթորինգի արդյունքների մասին 2025 թվականի 1-ին եռամսյակ» տեղեկագիր. <https://armmonitoring.am/>
14. Հայրապետյան Է. Մ. Հողագիտություն: Երևան. «Աստղիկ» հրատարակչություն, 2000, 456 էջ

15. ՀԱՀ Յակոբեա բնապահպանական կենտրոն, Հայաստանի Կարմիր գրքի օնլայն ատլաս. <https://ace.aua.am>
16. ՀՀ բույսերի Կարմիր գիրք: Երևան, 2010թ., 508 էջ
17. ՀՀ կենդանիների Կարմիր գիրք: Երևան, 2010թ., 361 էջ
18. ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքէջ. <http://www.env.am>
19. Методические пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов. ЗАО “Нипиотстром”, Новороссийск, 2000г.
20. ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի 2022-2026 թվականների զարգացման ծրագիր






ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱԿՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆՎԱՏՄԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Կադաստրի
կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 29 ապրիլի 2026 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ԶԻ ԹԻ ԲԻ ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Արարատ, համայնք Վեդի, գյուղ Գոռավան

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՏԱԹՂԹԵՐԸ

Վարձակալության պայմանագիր 02.04.2002թ. թիվ 1-498

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 03-031-0249-0069
Մակերեսի չափը (հա)՝ 10
Նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Այլ հողատեսք
Գրանցված իրավունքի տեսակը՝ ՎԱՐՉԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԱԿՅԱԿԱՆ N 29042026-03-0122, գաղտնաբառ՝ G1VSHWGMMMQD

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի
www.e-codastre.am կայքէջի միջոցով

Էջ 1/2

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝
2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

29.04.2026թ. կատարվել է անվանափոխում: Սեփականության իրավունքի պետական գրանցման իրական ամսաթիվն է 10.05.2002թ.:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ՎԱՐՄԻԿ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի գլխավոր ռեգիստր

ՎԱԿՅԱԿԱՆ N 29042026-03-0122, գաղտնաբառ՝ G1VSHWGMMMQD

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի
www.e-codastre.am կայքէջի միջոցով

Էջ 2/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՊՈԱԿ**

REPUBLIC OF ARMENIA
NATIONAL ACADEMY OF SCIENCES
INSTITUTE OF ARCHAEOLOGY
AND ETHNOGRAPHY SONP



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ
И ЭТНОГРАФИИ ГНКО

6. 05. 2026 թ.

N 2470-105

<<ՁԻ ԹԻ ԲԻ ՍԹՈՈՒՆ>> ՍՊԸ տնօրեն
Ն. Սարգսյանին

Հարգելի՛ պարոն Սարգսյան,

Ի պատասխան Ձեր՝ 30.04.2026թ. դիմումի, տեղեկացնում ենք, որ մեր աշխատակից Հ. Բադալյանը վերգետնյա հնագիտական տեղագնություն է իրականացրել Ձեր նախանշած վայրում: Հայցվող տարածքը գտնվում է Վեդի համայնքի Գոռավան բնակավայրից մոտ 2 կմ հարավ (ծածկագիր՝ 03-031-0249-0069): Ընկերությունը նախատեսում է այստեղ իրականացնել տրավերտինի հանքավայրի շահագործում: Այն իրենից ներկայացնում է թեք, լանջ, որի գերակշիռ մասը բնական ժայռեր են: Տեղ-տեղ կուտակված են նաև կիսամշակ և անմշակ խոշոր քարեր: Ուսումնասիրված տեղամասում և հարակից տարածքներում ՀՀ Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում ընդգրկված միավորներ չկան: Վերգետնյա տեղագնության ընթացքում մշակութային շերտեր չեն նշմարվել, չեն հայտնաբերվել նաև հնագիտական իրեր:



Հայցվող տարածքի լուսանկարները

Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
տնօրեն Արսեն Բոբոկյան

Երևան 0025, Չարենցի փող. 15, հեռ. / ֆաքս (37410) 55-68-96
Ереван 0025, ул. Чаренца 15, тел. / факс (37410) 55-68-96
Yerevan 0025, Charents str. 15, tel. / fax (37410) 55-68-96
E-mail: arsen.bobokhyan@sci.am, abobokhyan@aau.am



1-ԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄԸ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

<<ՋԻ ԹԻ ԲԻ ՍԹՈՈՆՆ>> ՄՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Գոռավան բնակավայրի վարչական տարածքի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի <<ԳՈՐՄԱԼԻ>> տեղամասի օգտակար հանածոյի հանքարդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտի վերաբերյալ առաջին քննարկում /1-ին լսում/ :

Վեդի համայնք Գոռավան բնակավայր:

29.11.2024 թ.

2024 թվականի նոյեմբերի 29-ին ժամը 15:00-ին ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Գոռավան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում /ցուղ Գոռավան, Գևորգ Մարգարյանի 12/ տեղի ունեցավ <<ՋԻ ԹԻ ԲԻ ՍԹՈՈՆՆ>> ՄՊ ընկերության /այսուհետև՝ Ընկերություն/ կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Գոռավան բնակավայրի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի <<ԳՈՐՄԱԼԻ>> տեղամասի օգտակար հանածոյի հանքարդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ առաջին հանրային քննարկում /1-ին լսում/:

Հանրային քննարկմանը մասնակցում էին ՀՀ Արարատի մարզի Վեդու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Շ. Մոսեփանյանը, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ՝ Շ. Բաքոյանը, համայնքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ներկայացուցիչներ, Գոռավան բնակավայրի վարչական ղեկավար՝ Դ. Ավետիսյանը, գյուղի բնակիչներ, Ընկերության ներկայացուցիչներ, <<Գեո Էկոնոմիկա>> ՓԲ Ընկերության գլխավոր տնօրեն՝ Արամ Բաղդասարյանը:

Հանրային քննարկումը /լսումը/ բացեց և խոսքով հանդես եկավ Վեդու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Հրաչյա Մոսեփանյանը և հայտնեց, որ ՀՀ կառավարության 19.11.2014թ. թիվ 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով (այսուհետև՝ Կարգ) կազմակերպվել և իրականացվում է Ընկերության կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Գոռավան բնակավայրի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի <<ԳՈՐՄԱԼԻ>> տեղամասի օգտակար հանածոյի հանքարդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտի վերաբերյալ թվով 1-ին հանրային քննարկումը /1-ին լսում/:

Ղեկավարվելով Կարգի դրույթներով, Վեդի համայնքի ղեկավարի կողմից հանրային քննարկումների պատասխանատու է նշանակվել Վեդու համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ՝ Շ. Բաքոյանը և խոսքը փոխանցվեց վերջինիս:

Վեդու համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Շ. Բաքոյանը նշեց, որ քննարկվող հարցի շուրջ 1-ին հանրային քննարկումն է /1-ին լսում/։ Վերջինս առաջարկեց ձեռնարկողին հանդես գալ համապատասխան զեկույցով, որից հետո հարց ու պատասխանի միջոցով կանցկացվի քննարկումը:

Ելույթ ունեցավ <<Գեո Էկոնոմիկա>> ՓԲ Ընկերության գործադիր տնօրեն՝ Արամ Բաղդասարյանը: Վերջինս ներկայացրեց ՇՄԱԳ հաշվետվությանը վերաբերող հարցեր՝

1. Տեղամասը, որտեղ գործունեություն է ծավալվելու Ընկերությունը զբաղեցնում է մոտ 10.6 հա. մակերես:

2. Տարածքը գյուղատնտեսական նպատակով չի օգտագործվում և անտառածածկույթից զուրկ է:

3. Հանքը նախատեսվում է շահագործելու բաց եղանակով:

4. Օգտակար հանածոն տրավերտինն է:

5. Պաշարները կազմում են 1.63 մլն.մ. խորանարդ և տարեկան արդյունահանվելու է 82 հազ.մ. խորանարդ, որը կբավարարվի 20 տարի արդյունահանելուն:

6. Աշխատանքները տարվելու են մեխանիկական եղանակով, առանց հորատապայթեցման աշխատանքների կիրառման ու առանց փոշու և աղմուկի առկայության:

7. Օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքները նախատեսվում է իրականացնել շուրջ տարյա աշխատանքային ռեժիմով: Մեկ տարում աշխատանքային օրերի թիվը՝ 305, մեկ շաբաթում՝ 6 օր, մեկ օրում աշխատանքային հերթափոխների թիվը՝ 1, մեկ հերթափոխի տևողությունը՝ 8 ժամ:

8. Փոշեզանգվածի նստեցումը հանքում և ճանապարհների իրականացվելու է ջրցան մեքենայով:

Վեդու համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Շ. Բաքոյանը հարցեր ուղղեց Ընկերության ներկայացուցիչներին՝

1. Հանքավայրը որքան տարածք է զբաղեցնելու .
2. Հանքավայրի տարածքը արոտավայր է թե՞ ոչ.
3. Կարձակվելու եք հողատարածքը թե սեփական է.
4. Հանքավայրի հումքը հանքավայրից տեղափոխվելու է արդյոք, թե՞ ոչ, և օգտվելու եք արդյոք համայնքային ճանապարհներից.
5. Կանաչապատման Ձեր տեսլականը՝ կլինի արդյոք հանքավայրին փոշեպաշտպան կանաչ գոտի.
6. Որքան աշխատատեղ է լինելու, և արդյոք ազդակիր համայնքից, բնակավայրից ընդգրկելու եք գործավորներ.
7. Հումքը որտեղ է վերամշակվելու, և վերջնական արտադրանք դառնալու.

Հարցերին պատասխանեց <<Գեո Էկոնոմիկա>> ՓԲ Ընկերության գլխավոր տնօրեն՝ Արամ Բաղդասարյանը: Վերջինս բոլոր հարցերին տվեց սպառիչ պատասխան, որը բավարարեց լսարանին:

Հաջորդիվ համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ՝ Մինոն Կարապետյանը հարցեր ուղղեց Հնկերության ներկայացուցչին՝

1. Ինչպես եք կարգավորելու ծանր բեռնատարների գերբեռնվածությունը.
2. Փոշեզանգվածի կառավարման ինչ մեխանիզմ եք կիրառելու, և լինելու է արդյոք ջրցան մեքենա, թե ոչ.

Հարցերին պատասխանեց <<Գեո Էկոնոմիկա>> ՓԲ Հնկերության գլխավոր տնօրեն Արամ Բաղդասարյանը հայտնելով, որ Հնկերության կողմից նախատեսվում է ստեղծել նոր՝ 10-15 և ավելի աշխատատեղ, ընդգրկելով ազդակիր Գոռավան բնակավայրի և Վեդի համայնքի բնակիչներին, ինչպես նաև ծանր գերբեռնված մեքենաների շարժը կկարգավորվի իրենց կողմից, իսկ ինչ վերաբերվում է փոշեզանգվածի նստեցմանը, իրենք ունենալու են սեփական ջրցան մեքենա, որը աշխատելու է ըստ անհրաժեշտության, կարիքի դեպքում թիրախային տեղերը կմշակեն մի քանի անգամ :


Հաջորդիվ բնակավայրի բնակիչ՝ Ադվան Խաչատրյանը հարց ուղղեց Հնկերության ներկայացուցչին՝

Շատ ընկերություններ հանքեր բացելու նպատակով դիմում են բնակավայրին տալով շատ խոստումներ, իսկ արդյունքում ճանապարհները մնում են անբարվոք, դաշտերը պատվում են փոշեռմպերով:

Հարցերին պատասխանեց <<Գեո Էկոնոմիկա>> ՓԲ Հնկերության գլխավոր տնօրեն Արամ Բաղդասարյանը հայտնելով, որ Հնկերության կողմից նախատեսվում է ձեռք բերել սեփական ջրցան մեքենա, որը կկատարի հենց փոշենստեցման աշխատանքները:

Նախագահողը հարցրեց, թե արդյո՞ք մասնակիցների կողմից կան հարցեր, թե՞ ոչ: Հաշվի առնելով լսարանի դիրքորոշումը՝ հայտարարեց լսման ավարտ:

Կից ներկայացվում է մասնակիցների ցանկը՝ 2 թերթ և հանրային քննարկումների էլեկտրոնային կրիչը:

Վարդո՝ Գյուլ. և Բնապահ. Բաժնի պետ՝ /  / Շ. Բաքոյան

Նախաձեռնող՝ «ԶԻ ԹԻ ԲԻ ՍԹՈՈՒՆ»
ՄՊԸ-ի տնօրեն՝












/  / S. Հակոբյան

«ԶԻ ԹԻ ԲԻ ՍԹՈՈՒՆ» ՄՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Գոռավան բնակավայրի տարածքում Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի «ԳՈՐՄԱԼԻ» տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման (ընդերքօգտագործման) թույլտվություն ստանալու համար շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտի հանրային լսման մասնակիցների ցուցակ:

(Առաջին հանրային լսում)

ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Գոռավան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայր (գյուղ Գոռավան, Գևորգ Մարգարյանի 12)

« 29 » նոյեմբեր 2024թ.

Անուն Ազգանուն	Կոնտակտային տվյալներ	Ստորագրություն
Բաղդասարյան Արամ	"Գեո Էկոնոմիկա" ՓԲԸ. Զեմ. և Կոնոմի	
Զարգարյան Եվա	Վեդի համայնքից	
Զան Բադրյան	Վեդի համայնքից	
Հրաչյա Արևիկապետյան	Վեդի համայնքից. արդ. - արդյունաբերություն	
Հրաչյա Էկոմի	Վեդի համայնքից	
Կարեն Կոնստանտինյան	Վեդի համայնքից	
Արթուր Խաչատրյան	Վեդի համայնքից. արդյունաբերություն	
Օժեհյան Լիլիթ	Կառ. օպերատոր	
Զարգարյան Կոնստանտին	Արդ. - արդյունաբերություն	
Զարգարյան Կոնստանտին	Արդ. - արդյունաբերություն	
Զարգարյան Կոնստանտին	Արդ. - արդյունաբերություն	



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնք
թ.Վեդի, Թումանյան 6, +(374)6088111 vedimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 Դեկտեմբերի 2024 թվականի N 160-Ա

«Ձի Թի Քի ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԿԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱՅԻ ԱՐԱՐԱՏԻ ՏՐԱՎԵՐՏԻՆՆԵՐԻ ԵՎ ԿԱՎԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ԳՈՐԱՄԱԼԻ ՏԵՐԱՄԱՍԻ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱՇՈՑԻ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՐԱՎԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Դեկլարվելով «Երջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 19.11.2014 թվականի N 1325-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 28-րդ կետի դրույթներով, հաշվի առնելով «Ձի Թի Քի ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Ձի Թի Քի ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Գոռավան բնակավայրի վարչական տարածքի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի ԳՈՐԱՄԱԼԻ տեղամասի օգտակար հանածոյի հանքարդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ 2024 թվականի նոյեմբերի 29-ին հրավիրված հանրային լսման (1-ին լսում) արդյունքները՝ *Վեդի համայնքի տվյալներն ընդգրկում է:*

1. «Ձի Թի Քի ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ-ի (գտնվելու վայրը՝ ՀՀ, ք.Երևան, Պողոսյան 12) կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Գոռավան բնակավայրի վարչական տարածքի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի «ԳՈՐԱՄԱԼԻ» տեղամասի օգտակար հանածոյի հանքարդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ նախատեսվող գործունեությանը տրամադրվել նախնական համաձայնություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարկմանը հաջորդող հինգերորդ օրը:

Կողմ -14	Դեմ -8	Ձեռնպահ -0
ՍԱՐԳՍՅԱՆ ԳԱՐԻԿ	ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ	
ՀԱԿՈԲՅԱՆ ՌԱՖԱԵԼ	ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳՈՂՄԻ	
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՄՅԱԻՍ	ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱՆՈՒՍՅ	
ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐՄԵՆ	ԱՔՐԱՀԱՄՅԱՆ ԷԴԻԿ	
ՀՈՎԱԿԻՑՅԱՆ ԱԶԻԶ	ՀՈՎԱԿԻՑՅԱՆ ԳԵՂԱՄ	
ԹՈՒՆՅԱՆ ԹԻՄՈՏԻՆԵ	ԹՈՒՆԻԿՅԱՆ ՀԱԿՈՔ	
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՄՅԻԿ	ԳԵՎՈՐԳՅԱՆ ԻՇԽԱՆ	
ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՐՈՔ	ԻՍՊԻՐՅԱՆ ԷՂԳԱՐ	
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԶԵՆՖԻՐԱ		

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԵՂԱՄ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆԺԵԼԱ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՏԱՐՈՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԼԱՐ

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

2024թ. դեկտեմբերի 25
թ. Վեդի

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

Գործողություն	Հնարավոր ազդեցություն	Առաջարկվող մեղմացման միջոցառումներ	Մշտադիտարկման ցուցիչ	Ծախսերը, հազ. դրամ	Կատարող	Վերահսկող
1	2	3	4	5	6	7
Նախապատրաստական աշխատանքներ						
Ճանապարհների և արտադրական հրապարակի կարգաբերում	Փոշու արտանետում	Արտադրական հրապարակի ջրցանում	հանքափոշի	500	«ԶԻ ԹԻ ԲԻ ՍԹՈՈԻՆ» ՍՊԸ	Բնապահպանական և ընդերքի տեսչական մարմին
	Դիզ. վառելիքի այրման արգասիքների արտանետում	Տեխնիկատրանսպորտային միջոցների պլանային տեխնիկական զննումների իրականացում և միայն սարքին վիճակում օգտագործում, ցանկալի է դիզելային շարժիչների կլանիչներով ապահովում:	կախյալ մասնիկներ ածխածնի օքսիդ, ածխաջրածիններ, ազոտի օքսիդներ, մուր, բենզ(ա)պիրեն			
	Հողերի աղբոտում և աղտոտում	– տեխնիկատրանսպորտային միջոցների պլանային տեխնիկական զննումների իրականացում և միայն սարքին վիճակում օգտագործում՝ բացառելու համար վառելիքի և յուղերի պատահական արտահոսքը, – օգտագործված յուղերի հավաքում մետաղյա տակառներում և պահպանում հատուկ առանձնացված տեղերում՝ հետագա ուտիլիզացիայի համար – առաջացած մետաղների և այլ թափոնների /անօգտագործելի պահեստամասեր և ավտոդոդեր/ հավաքում՝ հետագա ուտիլիզացիայի համար	հողերում նավթամթերքների պարունակությունը			

1	2	3	4	5	6	7
Արդյունահանման աշխատանքներ						
Հանքավայրի շահագործում	Մթնոլորտային օդի աղտոտում. ա/փոշու արտանետում, բ/ դիզ. վառելիքի այրման արգասիք- ների արտանետում.	- արտադրական հրապարակների, մոտեցող ճանապարհների ջրցանում, լցակայանների պարբերական ջրցանում, - տեխնիկատրանսպորտային միջոցների պլանային տեխնիկական զննումների իրականացում և միայն սարքին վիճակում օգտագործում, աշխատանքների կատարման վայրում նյութերի/թափոնների բաց այրման բացառում	հանքափոշի, կախյալ մասնիկներ ածխածնի օքսիդ, ածխաջրածիններ, ազոտի օքսիդներ, մուր, բենզ(ա)պիրեն	4174.8	«ԶԻ ԹԻ ԲԻ ՍԹՈՈԻՆ» ՍՊԸ	Բնապահպանական և ընդերքի տեսչական մարմին
	Հողերի խախտում	խախտված տարածքների ռեկուլտիվացիայի իրականացում՝ արդյունահանման աշխատանքների ավարտից հետո:	-			
	Հողաբուսական շերտի պահպանում	- առանձնացված կուտակում և փոում բացահանքի հատակին, - հողմատարումը կանխելու համար դրանց պարբերաբար ջրցանում՝ թույլ ինտենսիվությամբ, - ողողումը կանխելու համար անձրևաջրերի հեռացման առումների կառուցում:	-			
	Հողերի աղբոտում և աղտոտում	- օգտագործված յուղերի հավաքում մետաղյա տակառներում և պահպանում հատուկ առանձնացված տեղերում /օրինակ՝ վառելիքաքսուքային նյութերի պահեստում/ հետագա ուտիլիզացիայի համար: - առաջացած մետաղի և այլ թափոնների /անօգտագործելի պահեստամասեր և ավտոդողեր/ հավաքում՝ հետագա ուտիլիզացիայի համար - կենցաղային աղբի առանձին հավաքման տեղի կահավորում, աղբամանների տեղադրում աշխատակիցների հանգստյան տեղերում սննդի ընդունման կետերում կանոնավոր աղբահանում:	հողերում նավթամթերքների պարունակությունը			

1	2	3	4	5	6	7
	ազդեցություն բուսական և կենդանական աշխարհի վրա	<ul style="list-style-type: none"> - ապահովել վայրի բուսատեսակների բազմազանության ամբողջականությունը, բուսական ծածկույթի ջրապահպան, հողապաշտպան, կլիմայակարգավորիչ և ռեկրեացիոն հատկությունների անխաթարությունը, - ապահովել կենդանիների գենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանությունը, պաշտպանությունը, բնականոն վերարտադրությունը, կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը, կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության պահպանությունը, 	տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն	ընթացիկ ծախսեր	«ԶԻ ԹԻ ԲԻ ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ	
Ֆիզիկական ազդեցություններ	աղմուկ	<ul style="list-style-type: none"> - աղմկախլացուցիչների տեղադրում շարժական կայանների և սարքավորումների վրա - սարքավորումների կանխարգելիչ վերանորոգում աղմուկը նվազեցնելու նպատակով 	աղմուկի մակարդակը և թրթռումների ազդեցությունը	ընթացիկ ծախսեր	«ԶԻ ԹԻ ԲԻ ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ	Բնապահպանական և ընդերքի տեսչական մարմին, առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին
Առողջություն և աշխատանքի անվտանգություն	վնասվածքներ և պատահարներ աշխատավայրում	<ul style="list-style-type: none"> - աշխատատեղերում, հասանելի վայրում, առաջին օգնության բժշկական արկղիկներ և հակահրդեհային միջոցների առկայություն, - աշխատակազմին համազգեստով և անվտանգության անհրաժեշտ միջոցներով ապահովվում, - անվտանգության սարքավորումների օգտագործման ուսուցանում, վերահսկում և պարտադրում: 		ընթացիկ ծախսեր		